



Ի՞նչ է Մտագարությունը

ՄՏԱԳԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այս Օգնության Թերթիկը կը բացատրե մտագարությունը, ո՞վ կրնայ ունենալ եւ անոր կարգ մը ամենէն սովորական տեսակները: Ան կը բացատրե մտագարութեան կարգ մը նախնական նշանները եւ կը շեշտէ կանուխ բժշկական ախտաճանաչման կարեւորութիւնը:

Մտագարութիւնը եզր մըն է որ կը գործածուի նկարագրելու ախտանշանները հիւանդութիւններու մեծ խումբի մը որոնք հետզհետէ անձի մը գործելակերպի տկարացում կը պատճառեն: Ան լայն եզր մըն է որ կը գործածուի նկարագրելու յիշողութեան կորուստ, իմացութիւն, բանականութիւն, ընկերային ատակութիւններ եւ ինչ որ պիտի նկատուէր բնականոն զգացական հակազդեցութիւններ:

Ո՞վ կրնայ ունենալ մտագարութիւն

Մտագարութիւն ունեցողները ընդհանրապէս տարեցներ են, բայց կարելոր է յիշել որ տարեցներէն շատեր մտագարութիւն չեն ունենար: Ան ծերանալու ընթացքին բնականոն մէկ մասը չէ: Մտագարութիւնը կրնայ պատահիլ որեւէ մէկուն, բայց ան աւելի հասարակ է 65 տարեկանէն վերջ: 40ական եւ 50ական տարիքի անձեր եւս կրնան մտագարութիւն ունենալ:

Ի՞նչ է մտագարութեան պատճառը

Մտագարութեան շատ տեսակները կան եւ իւրաքանչիւրը իր պատճառները ունի: Մտագարութեան ամենէն հասարակ տեսակներէն ոմանք են

Ալզայմըրզի հիւանդութիւն – Alzheimer’s disease

Ալզայմըրզի հիւանդութիւնը ամենէն հասարակ տեսակն է մտագարութեան եւ պատասխանատու է բոլոր պարագաներու 50% էն 70% ին: Ան յառաջացող, այլասերիչ հիւանդութիւն մըն է որ կը հարուածէ ուղեղը: Մինչ ուղեղի բջիջները կը կծկուին կամ կ'անհետանան, անբնական նիւթեր կը կուտակուին որպէս «կնճիռներ» ուղեղի բջիջներուն կեդրոնը, եւ որպէս «կոռ» ուղեղի բջիջներուն դուրսը: Ասոնք կը խանգարեն հաղորդակցութիւնը ուղեղին մէջ, փաստելով ուղեղի բջիջներու միջեւ կապերուն: Վերջապէս ուղեղի բջիջները կը մեռնին եւ այս կը նշանակէ որ տեղեկութիւն կարելի չէ վերստին կամ իւրացնել: Քանի որ Ալզայմըրզի հիւանդութիւնը կ'ազդէ ուղեղի իւրաքանչիւր մասին, որոշ պաշտօններ կամ կարողութիւններ կը կորսուին:

Երակային մտագարութիւն - Vascular dementia

Երակային մտագարութիւնը լայն եզր մըն է դէպի ուղեղ արիւնի շրջանառութեան խնդիրներուն առնչուող մտագարութեան համար եւ երկրորդ ամենահասարակ տեսակն է մտագարութեան: Երակային մտագարութեան կարգ մը տարբեր տեսակները կան: Երկու ամենէն հասարակ տեսակներն են Multi-infarct մտագարութիւն

եւ Binswanger’s հիւանդութիւն: Multi-infarct մտագարութիւնը յառաջ կուգայ կարգ մը թեթեւ կաթուածներու պատճառով, որոնք կը կոչուին փոքր կաթուածներ կամ Transient Ischaemic Attacks (TIA) եւ հաւանաբար ամենէն հասարակ տեսակն է Երակային մտագարութեան: Binswanger’s հիւանդութիւնը (նաեւ ճանչցուած իբրեւ ենթակեղեւային - Subcortical - երակային մտագարութիւն) կ'առնչուի կաթուածի պատճառած ուղեղի փոփոխութիւններուն: Ան կը պատահի արեան գերճնշումի, երակներու խտացման եւ անբարար արեան հոսքի պատճառով:

Երակային մտագարութիւնը կրնայ նմանիլ Ալզայմըրզի հիւանդութեան, եւ, Ալզայմըրզի հիւանդութեան եւ Երակային մտագարութեան խառնուրդ մը կրնայ պատահիլ ոմանց:

Պարկինսոնի հիւանդութիւն – Parkinson’s disease

Պարկինսոնի հիւանդութիւնը յառաջացող խանգարում մըն է կեդրոնական ջղային դրութեան: Ան կը յատկանշուի դողով, մարմնի անդամներու եւ յղերու կարծրացումով, խօսելու եւ ֆիզիքական շարժումներու դժուարութեամբ: Հիւանդութեան յառաջացեալ վիճակին մէջ ոմանք մտագարութիւն կրնան ունենալ: Դեղեր կրնան բարելաւել ֆիզիքական նշանները, բայց կրնան կողմնակի ազդեցութիւններ ունենալ որոնց մէջ նաեւ զարանցանք, ցնորք, շփոթութեան ժամանակաւոր վատացում եւ անբնական շարժումներ:

Մտագարութիւն Հիւծող նիւթերով Dementia with Lewy bodies

Հիւծող մարմիններով մտագարութեան պատճառը ուղեղին մէջի ջղային բջիջներու այլասերումն ու մեռնիլն է: Անունը կուգայ Lewy մարմիններ կոչուած անբնական գնդաձեւ կառոյցներէ, որոնք կը կազմուին ջղային բջիջներու մէջ: Կը կարծուի որ ասոնք կը սատարեն ուղեղի բջիջներու մահուան: Հիւծող նիւթերով մտագարութիւն ունեցողները բաներ կը տեսնեն (կը զարանցեն) կարծրութիւն կամ դող կ'ունենան (պարկինսոնի հիւանդութիւն), եւ իրենց վիճակը արագօրէն կը փոխուի, յաճախ ժամէ ժամ կամ օրէ օր: Այս ախտանշանները կարելի կ'ընեն զայն զանազանելու Ալզայմըրզի հիւանդութենէն: Հիւծող մարմիններով մտագարութիւնը երբեմն կրնայ գոյակցիլ Ալզայմըրզի հիւանդութեան եւ Երակային մտագարութեան հետ:

Fronto Temporal Lobar Degeneration (FTLD)

Այս անունը կը տրուի մտագարութիւններու խումբի մը երբ այլասերում գոյութիւն ունի ուղեղի

ճակատային կամ քունքի բաժիններն մեկուն կամ երկուքին մեջ: Ան կը ներառէ Fronto Temporal Մտագարություն, Յառաջացող non-Fluent Aphasia, Semantic Մտագարություն եւ Pick's հիւանդություն: FTLD ունեցող մարդոց շուրջ 50% ընտանեկան պատմություն ունին այս հիւանդության: Չայն ժառանգողները յաճախ փոփոխություն կրած կ'ըլլան թաու բրոթէյն ծինի 17 գունահատին վրայ որու պատճառով անբնական թաու բրոթէյն կ'արտադրուի: Այլ վտանգի ազդակներ ծանօթ չեն:

Հանթինկլորնգ հիւանդություն - Huntington's disease

Հանթինկլորնգ հիւանդությունը ժառանգական այլասերիչ ուղեղի հիւանդություն մըն է որ կ'ազդէ մտքին եւ մարմնին: Ան ընդհանրապէս երեսն կ'ըլլէ 30 եւ 50 տարիքին եւ կը յատկանշուի իմացութեան նուազումով եւ անդամներու կամ դէմքի մկաններու անկանոն, ակամայ շարժումով: Այլ նշաններ կը ներառեն անհատականութեան փոփոխություն, յիշողութեան խանգարում, խօսքի աղարտում, տկարացած դատողություն եւ հոգեբանական հարցեր: Բուժում գոյություն չունի դադրեցնելու համար հիւանդութեան յառաջացումը, բայց դեղերը կրնան հակակշիտակ առնել շարժումի անկանոնությունները եւ հոգեբանական ախտանշանները: Մտագարություն տեղի կ'ունենայ հիւանդներու մեծ մասին մեջ:

Ալքոհի առնչուող մտագարություն - Korsakoff's syndrome

Չափէն աւելի ալքոհը, յատկապէս անբաւարար թայամին (Վիթամին Պ) պարունակող սննդականոնի մը հետ կրնայ անշքեղի փասս պատճառել ուղեղին: Եթէ խմելը դադարեցուցի քիչ մը բարելաւում կրնայ ըլլալ:

Այս մտագարությունը կարելի է արգիլել: Աւստրալիոյ Ազգային Առողջապահութեան եւ Բժշկական Հետազոտութեան Խորհուրդի յանձնարարությունները ալքոհի ապահով գործածութեան համար այն է թէ՛ այր մարդիկ 4 միջակ չափ խմիչքէ աւելի պէտք չէ խմեն օրական եւ կիները ոչ աւելի քան 2 միջակ չափ խմիչք օրական: Կանոնաւորաբար կամ այս չափերէն նուազ խմողներու մօտ ալքոհի առնչուող մտագարութեան եւ Korsakoff's syndrome ի զարգացումի մասին չէ տեղեկացուած:

Ուղեղին ամենաշատ յարձակումի ենթակայ մասերը անոնք են որոնք կը գործածուին յիշողութեան եւ ծրագրումի համար, կազմակերպելու եւ դատողութեան, ընկերային ատակութեան եւ հաւասարակշռութեան: Թայամին օգտագործելը կ'երեւի թէ կ'օգնէ արգիլելու եւ բարելաւելու վիճակը:

Creutzfeldt-Jacob disease

Creutzfeldt-Jacob հիւանդությունը չափազանց հազուադիւս, մահացու ուղեղային խանգարում մըն է որու պատճառը բրիոն կոչուած բրոթէյնի մասնիկ մըն է: Ան կը պատահի տարեկան իւրաքանչիւր մէկ միլիոնի մէջ մէկ անձի: Նախնական ախտանշաններն են յիշողութեան խանգարում, վարուելակերպի փոփոխություններ եւ համադրութեան պակաս: Քանի հիւանդությունը յառաջանայ, սովորաբար արագօրէն, մտային խանգարումը աւելի յատկանշական կը դառնայ, ակամայ շարժումներ կ'երեւին, եւ անձը կրնայ կուրնայ, տկարություն զգալ թեւերուն կամ արունքներուն մէջ եւ վերջապէս, մահաքունի մտնել:

Մտագարութիւն է

Շատ մը պարագաներ կան որոնք մտագարութեան նման ախտանշաններ ունին: Այս պարագաները բուժելով ախտանշանները պիտի անհետանան: Ասոնք կրնան ըլլալ կարգ մը վիթամիններու եւ հորմոններու պակասություն, ընկճուածություն, դեղերու բախում կամ չափէն աւելի դեղեր, վարակում եւ ուղեղի ուռեր:

Անհրաժեշտ է որ բժշկական ախտաճանաչում ըլլայ կանուխէն երբ նշաններ կ'սկսին առաջին անգամ երեւիլ, ապահովելու համար որ բուժելի վիճակ մը ունեցող անձը ճշգրտօրէն ախտաճանաչուի եւ բուժուի: Եթէ նշաններու պատճառը մտագարություն է, կանուխ ախտաճանաչում մը պիտի նշանակէ կանուխ մատչելիութեան, ազակցութեան, տեղեկություն, եւ դեղեր, եթէ կան:

Մտագարությունը կրնա՞յ ժառանգուիլ

Այդ կախում պիտի ունենայ մտագարութեան պատճառէն, այնպէս որ կարեւոր է ունենալ հաստատ բժշկական ախտաճանաչում: Եթէ մտահոգություններ կան մտագարությունը ժառանգելու վտանգի մասին, խորհրդակցեցէք ձեր բժիշկին հետ կամ հեռաձայնեցէք Ազգայնորդ Աւստրալիա խօսելու համար խորհրդատուի մը հետ: Մտագարութեան պարագաներու մեծ մասը ժառանգուած չեն:

Ի՞նչ են մտագարութեան նախնական նշանները

Մտագարութեան նախնական նշանները շատ նուրբ են եւ անստոյգ եւ կրնան անմիջապէս յայտնի չըլլալ: Կարգ մը սովորական նշաններ են

- Յառաջացող եւ յաճախակի յիշողութեան կորուստ
- Շփոթություն
- Անհատականութեան փոփոխություն
- Անտարբերություն եւ ներքաշում
- Առօրեայ գործերը կատարելու անկարողություն

Ի՞նչ կարելի է ընել օգնելու համար

Ներկայիս արգիլելու կամ բուժելու միջոց չկայ մտագարութեան շատ մը տեսակներու համար: Սակայն, տեսնուած է որ կարգ մը դեղեր կը մեղմացնեն ախտանշանները:

Աջակցությունը անհրաժեշտ է մտագարություն ունեցող անձերու համար եւ ընտանիքներու, բարեկամներու եւ հոգատարներու օգնությունը կրնայ դրական տարբերություն ընել վիճակը կառավարելու մէջ:

Յաւելեալ Տեղեկություն

Alzheimer's Australia կ'առաջարկէ աջակցություն, տեղեկություն, դաստիարակություն եւ խորհրդատուություն: Հեռաձայնեցէք National Dementia Helpline **1800 100 500** թիւին:

Յաւելեալ տեղեկութեան համար եւ այլ Օգնութեան Թերթիկներ տեսնելու համար այցելեցէք մեր համացանցի էջը **www.alzheimers.org.au**